ՀԱՂԱՐԴԻՈՒԻՍՆԵՐ

ԱՐՄԻՆԵ ԵՓՐԻԿՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ԳՈՂԹԻ 1919 Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտությունը եւ Մուդրոսի զինադադարի մասին լուրերը հայ ժողովուրդը ցնծությամբ ընդունեց: Թվում էր, թե Հայաստանում ընդհանրապես, Նախիջեւանի գավառում՝ մասնավորապես խաղաղություն կհաստատվի եւ բոլոր հարցերը արդարացի կլուծվեն:

1918 թ. նոյեմբերի վերջին թուրքական զորքերը սկսեցին հեռանալ Հայաստանից: Հանրապետության իշխանությունները շտապ միջոցներ ձեռնարկեցին թուրքերի կողմից դատարկվող տարածքները զորքեր մտցնելու եւ տեղական վարչակազմեր ձեւավորելու համար: ՀՀ ներքին գործերի նախարարի 1918 թ. նոյեմբերի 30-ի կարգադրությամբ Հայաստանի իշխանության ենթակայության տակ անցնող տարածքներում նշանակվեցին կոմիսարներ: Նախիջեւանի գավառային կոմիսար նշանակվեց Գ. Տեր-Հարությունյանը (Նժդեհը): Նշանակվում են նաեւ նրա օգնականը եւ գավառակների կոմիսարները[1]: Դեկտեմբերի 6-ին հանրապետության կառավարությունը որոշում է հաշտարար բաժանմունքներ եւ քննչական մասեր բացել Շարուրում (Բաշ-Նորաշենում), Նախիջեւանում եւ Օրդուբադում:

Սակայն դեպքերի զարգացումն այլ ընթացք ստացավ: 1918 թ. վերջին բռնկվեց հայ-վրացական պատերազմը, եւ կառավարությունը հարկադրված ողջ ուշադրությունը կենտրոնացրեց Հայաստանի հյուսիսային սահմաններում սկսված մարտական գործողությունների վրա:

Թուրքերի հեռանալուց հետո հայկական զորքերի հետ իրենց հայրենի օջախներ սկսեցին վերադառնալ արեւելահայ գաղթականները, այդ թվում նաեւ շարուրցիներն ու նախիջեւանցիները: Վախենալով վրեժխնդրությունից, ինչպես նաեւ չցանկանալով կորցնել իրենց ձեռքն անցած հայերի ունեցվածքը, Շարուր-Նախիջեւանի տարբեր վայրերից սկսվեց հեռագրերի հեղեղ Թավրիզ՝ պարսից թագաժառանգ Հազրաթ Վալային՝ «խնդրելով օգնութիւն, միջնորդութիւն, որ հայերը չկոտորեն իրենց, որ հայերի սոսկալի ջարդերից ազատեն իրենց»[2]:

1 Տե՛ս ԲՀԱ, 1933, թ. 1-2, էջ 58:
2 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 5:

Հայկական իշխանությունների անկազմակերպ, անհետևողական ու անհաշվենկատ, անվճռական քայլերը, տեղի հայության անպատրաստակամությունը՝ վճռականորեն տեր կանգնելու իր հայրենիքին, գումարվելով ՀՀ թուլությանը եւ Անգլիայի հակահայկական դիրքորոշմանը, օբյեկտիվորեն խոչընդոտեցին ՀՀ օրինական իշխանության ամբողջական եւ ամուր հաստատմանը Նախիջեւանում:

Նախիջեւանի թուրք բնակչության ղեկավարությունը բացեիբաց ցույց էր տալիս իր հակահայկական տրամադրության եւ հայկական իշխանության տապալման ձգտումները:

Գողթնում, որը Նախիջեւանում հայկական իշխանության օրոք գավառի կարգավիճակ էր ստացել՝ Օրդուբադի փոխարեն կենտրոն ունենալով Ագուլիսը, կյանքը կարծես խաղաղ հունի մեջ էր մտել եւ որոշ ժամանակ հայերի ու թուրքերի միջեւ հարաբերությունները կարգավորվել էին: Սակայն դա լոկ թվացյալ էր: Նախիջեւանի հայերի նահանջից ոգեւորված Գողթնի մահմեդականները արդեն հուլիսի 25-ին ուժեղ կռիվներ սկսեցին: Գողթնի գավառային կոմիսար Աշոտ Մելիք-Մուսյանը օգոստոսի 3-ին եւ 18-ին հաղորդում էր, որ հայկական Վերին եւ Ներքին Ազա, Դեր, Շուռութ, Փորադաշտ, Գյաղ գյուղերը, իսկ Ղազանչի գյուղից 500 հոգի մուսուլմանների ճնշման տակ անցել էր Գողթնի լեռնային հատված, այդ ընթացքում հայերը ոչնչացրել են թաթարական Բիլավ եւ Բեյրութ գյուղերը: 10-օրյա համառ կռիվներից հետո ընկնում է Տանակերտ հայկական գյուղը: Հատկապես դաժանորեն է ոչնչացվում հայկական փոքրիկ Քաղաքիկ կոչվող գյուղը: Գյուղի մի խումբ երիտասարդների հաջողվում է հեռանալ լեռներ, մնացած ողջ բնակչությունը ոչնչացվում է, բացի 40-50 երիտասարդ աղջիկներից, որոնք գերեվարվում են[3]:

Տանակերտի անկումից եւ Քաղաքիկի կոտորածից հետո երկու Ագուլիսները ճանաչում են Ադրբեջանի իշխանությունը[4]: Վ. Ագուլիսի ժողովուրդը Օրդուբադում գտնվող Ադրբեջանի իշխանության ներկայացուցչին տալիս է մոտավորապես հետեւյալ բովանդակությամբ համախոսական. «Մենք, Վ. Ագուլիսի ժողովուրդս, ճանաչում ենք Ադրբեջանի կառավարության Օրդուբադում գտնվող ներկայացուցիչին եւ խնդրում ենք նրա հովանավորությունը»[5]: Ագուլիսների օրինակին հետեւում է Ցղնայի (Չանանաք) բնակչությունը: Սրանք եւս երեք պատգամավոր են ուղարկում Օրդուբադ եւ խոսք տալիս համերաշխ ապրել հարեւան թուրքերի հետ[6]:

Այդ օրերին գավառապետ Աշոտ Մելիք-Մուսյանը գտնվում էր Ռամիսում եւ նախահարձակ լինելու ծրագրեր էր մշակում: Այստեղ օգոստոսի 25-ին գումարվեց Գողթնի հայության 5-րդ համագումարը, որին մասնակցում էին Բիստ, Փառակա, Ալահի, Մեսրոպավան, Ռամիս, Տանակերտ, Քաղաքիկ, Դեկսար, Շուռութ, Փորադաշտ, Գյաղ,

3 Տես **Ն. Նախնազարյան**, Գողթան գավառ, Թեհրան, 1991, էջ 334:
4 Տես ՀԱԱ, ֆ. 119, ց. 1, գ. 95, թ. 5, ֆ. 201, ց. 1, գ. 170, թթ. 19-20:
5 Տես ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 41, թ. 11:
6 Տես անդ:

Ղազանչի, Ազա եւ Դեր գյուղերի 40 պատգամավորներ: Քննարկվեց ստեղծված դրությունը եւ ընդունվեցին որոշումներ: Դրանք մասնավորապես նախատեսում էին պարզել Հայաստանի կառավարության վերաբերմունքը դեպի Գողթնը, հնարավոր միջոցները Գողթնը ապահովելու դրսի ուժով, հացով եւ դրամով, սերտ կապ հաստատել Գենվազի, Ղափանի եւ Գորիսի հետ, եւ խնդրել Զանգեզուրի ղեկավարությանը հովանավորել եւ կառավարել Գողթնը: Որոշումների վերջում նախատեսվում էր դիմել Հայաստանի կառավարությանը, եւ եթե «Հայաստանի կառավարութիւնը զլանալու լինի անմիջապես պատասխանելու Գողթնի դրած հարցերին, այն ժամանակ համագումարը այս արձանագրութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով, լրագիրների միջոցով, հասարակական լայն խավերի նիւթ է դարձնելու եւ իր դատը հանձնելու համայն հայութեան պաշտպանութեանը»[7]:

Համագումարի որոշումները գավառի միլիցիայի պետ Մովսես Գյուլնազարյանը Զանգեզուրով հասցրեց Երեւան եւ սեպտեմբերի 8-ին երկու զեկուցագիր ներկայացրեց՝ մեկը Նախարարների խորհրդին, մյուսը ներքին գործերի նախարարին: Ներկայացնելով ստեղծված իրադրությունը, նա համագումարի անունից խնդրեց ՀՀ կառավարության գրավոր հրահանգները Գողթնի անելիքների մասին[8]:

ՀՀ կառավարությունը սեպտեմբերի 9-ին քննարկելով Գողթնի մասին հարցը, որոշեց դրամի պահանջը բավարարել, իսկ հաց ու մարդիկ ուղարկելը համարեց անհնար[9]: Նույն օրն էլ պատրաստվեցին 5-րդ համագումարի նախագահությանն ուղարկվող այս հրահանգները: «Երեւանի հայությունը միշտ եղբայրական սրտացավ վերաբերմունք է ունեցել եւ ունի դեպի Գողթանի անջատված հայ ազգաբնակչությունը:

Եթե մեզնից տեղեկություններն ու լուրերը ուշ են ստացվում, դրա պատճառը հաղորդագրության դժվարությունն ու ճանապարհների հեռավորությունն է: Ուղարկում ենք Ձեզ վերջին լուրերն ու թերթերը: Բանակցություններ ենք վարում գլխավոր կոմիսար գնդապետ Հասկելի հետ՝ Նախիջեւանի եւ Շարուրի գավառներում ամերիկյան նահանգապետություն հաստատելու համար: Ձեզ մոտ նրա նեկայացուցիչը Դ-ը Աշերը իր հետ բերում է փող եւ դեղորայք:

Ազգային խորհուրդը, եթե առանձին ազգային վտանգ չի սպառնում՝ թող մնա իր տեղը, իսկ եթե որեւէ անապահովություն է զգացվում, լավ կլինի, որ ժամանակավորապես փոխադրվի Զանգեզուր:

Մենք ուժի չենք դիմելու եւ ոչ էլ ուժով ենք գալու ձեզ մոտ, մեր ցանկությունն է համաձայնության ճամփով բանալ երկաթուղին եւ ալյուր ուղարկել:

Չպետք է մոռանանք, որ Հայաստանն ինքն էլ անընդհատ ենթարկվում է հարձակումների գրեթե իր բոլոր սահմաններում, եւ չնայած այդ ծանր դրության մենք միշտ հի-

7 Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 95, թթ. 2-4:
8 Տես ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 170, թթ. 22-23:
9 Տես ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 170, թ. 21:

շում ենք Գողթանն ու նրա բնակչությունը եւ ամեն կերպ աշխատում աջակցություն ցույց տալ մեզնից անջատված մեր հարազատ եղբայրներին»[10]:

Իրականում ՀՀ կառավարությունը գաղտնի կերպով սպեղծում է երկու ջոկատ՝ Գարեգին Նժդեհի եւ Ղազար Քոչարյանի (Քաչալ Ղազար) գլխավորությամբ, որոնք Դարալագյազի եւ Զանգեզուրի վրայով պետք է անցնեին Գողթն, փաստորեն իրականացնելով Ա. Մելիք-Մուսյանի օգոստոսի 3-ի խնդրանքը, որում նշվում էր. «Փրկված է Գողթնը, եթե գոնե 400 սրտացավ հայ զինվոր մեզ օգնության հասնեն»[11]: Եթե հանգամանքների բերումով Նժդեհը մնաց Մեղրիում եւ կազմակերպեց Ղափան-Գենվազի պաշտպանությունը, ապա Ղ. Քոչարյանը հոկտեմբերի 2-ին հասավ Գողթն:

Նրա ժամանումը որոշ չափով հուսադրեց գավառի պաշտպաններին: Հայկական ուժերի թիվը հասնում էր յոթ-ութ հարյուրի, երկու թնդանոթներով եւ 6 գնդացիրներով: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գավառում դրությունը հանգիստ էր, բայց նոյեմբերին, Զանգեզուրում ադրբեջանական ուժերի խայտառակ պարտությունից հետո, Գողթնում նորից սկսվեցին հարձակումները հայկական գյուղերի վրա:

Նոյեմբերի 10-ին Օրդուբադի մահմեդականները հարձակում սկսեցին Նազրվազի եւ Ալահիի ուղղությամբ, սակայն 5-ժամյա համառ պայքարից հետո թշնամին հետ շպրտվեց, կրելով մեծ կորուստներ[12]: Երկրորդ հարձակումը սկսվեց 25-ին, որը նույնպես հայկական ուժերը հաջողությամբ հետ մղեցին: Դեկտեմբերի 5-ին Նժդեհը հեռագրում է Երեւան. «Նոյեմբերի 25-ին թշնամին երկրորդ անգամ շրջապատեց Նազրվազ-Ալահի-Բիսրը: Կռիվը տեւեց 7-ից 14 ժամ: Ջոկատը ցույց տվեց համառ դիմադրություն, եւ է շպրտել թշնամուն, գրավել գերիներ եւ մեկ դրոշ: Թշնամին թողել է մինչեւ հիսուն դիակ, հատկապես տուժեց մեր հրետանու կրակից թշնամու հեծելազորը: Նույն օրը Օրդուբադի ուժերը երկու կողմից հարձակվեցին Ռամիսի վրա եւ այդ հարձակումը ավարտվեց թշնամու լրիվ պարտությամբ: Նժդեհ»[13]:

Պաշարված վիճակում, թիկունքում ունենալով Ողջիի եւ Գեղվաձորի թշնամաբար տրամադրված թուրքաբնակ գյուղերը, հնարավոր չէր երկար դիմադրել, ահա թե ինչու Ղափան-Գենվազի եւ Գողթնի զինված ուժերի հրամանատարությունը որոշեց մաքրել այդ շրջանները թուրքական գյուղերից: 1919 թ. նոյեմբերի 18-ին Գողթնի, իսկ 21-ին Ղափանի հայկական ուժերը մտան Ողջիի ձոր եւ քշեցին թուրքերին, իսկ դեկտեմբերի 1-ին Նժդեհի հրամանատարությամբ հայկական ուժերը մտան Գեղվաձոր եւ 7-8 օրվա ընթացքում այդ տարածքը եւս մաքրեցին թշնամուց, որը փախչելով անցավ Նախիջեւան[14]: Նժդեհը պատրաստվում էր շարժվել Օրդուբադի վրա, սակայն Զանգեզուրում հայկական ուժերի հրամանատար գեներալ Ղազարյանը հրամայեց դադարեցնել հարձակումը[15]:

10 ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 95, թ. 1:
11 ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 170, թ. 20:
12 Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 110, թ. 18:
13 Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 378:
14 Տես ՀԱԱ, գ. 475, թ. 53 շրջ.:
15 Տես անդ:

Մի քանի օր անց՝ դեկտեմբերի 18-ին Ողջիի եւ Զանգեզուրի թուրքերը տեղի թուրքական խուժանի հետ ներխուժեցին Ներքին Ագուլիս եւ սկսեցին կոտորել ու թալանել հայ բնակչությանը: Դեպքերի ականատես, կոտորածից փրկված Ագուլիսի հաշտարար դատավոր Հովհաննես Տեր-Անտոնյանը 1920 թ. հունվարին Երեւանում հայտնում էր, որ Ներքին Ագուլիսի բնակիչները, թողնելով բնակարանները եւ ունեցվածքը, իսկ ոմանք էլ իրենց երեխաներին եւ ծերերին, փախչում էին Վերին Ագուլիս[16]:

Այն, ինչ հետագա օրերին կատարվեց Վ. Ագուլիսում, շատ բնորոշիչ է մի կողմից հայերի միամտությունը, մյուս կողմից՝ թուրքերի դավադիր եւ արնախում էությունը ներկայացնելու առումով:

Վ. Ագուլիսի հայերը, որքան էլ զարմանալի է, հաջորդ օրը դիմեցին Օրդուբադի գավառապետ Աբաս Կուլի Թահիրովին, քաղաքի պարետ, թուրք կապիտան Էդիֆ բեյին մուսուլման բնակչությունից Վ. Ագուլիսը պաշտպանելու խնդրանքով: Նույն օրը Վ. Ագուլիս ժամանեց Էդիֆ բեյը եւ, տեղավորվելով Արամ Տեր-Միքայելյանի տանը, դիմեց Նախիջեւանում գտնվող Խալիլ բեյին՝ զորք ուղարկելու, բայց ստացավ բացասական պատասխան, թե Նախիջեւանում անիշխանություն է, եւ ինքը զորք չի կարող ուղարկել: Էդիֆ բեյը հայերին խոստացավ զորք բերել տալ Բայազետից կամ անձամբ հայերին ուղեկցել մինչեւ սահմանագլուխ: Երեք-չորս օր անց Վ. Ագուլիսում սկսեցին կուտակել թուրք խուժանը: Քաղաքի բնակիչները դիմեցին Էդիֆ բեյին եւ խնդրեցին հրամայել եկվոր թաթարներին հեռանալ: Նա թեպետ խոստացավ դա անել, սակայն խուժանի թիվը ավելի շատացավ: 1919 թ. դեկտեմբերի 24-ին Վ. Ագուլիս ժամանեցին Ա. Թահիրովը եւ տեղի հոգեւոր շեյխը եւ տեղավորվեցին Տեր-Միքայելյանցի տանը: Նրանց ժամանումից մեկ ժամ հետո քաղաքի փողոցներում սկսվեց կոտորածը եւ հայկական թաղամասի հրդեհը: Շեյխը հայերին տեղափոխում է մուսուլմանական հատված եւ տեղավորում մի քանի տներում: Հաջորդ օրը կեսօրին հրահանգ է ստացվում, թե հայերին պետք է տեղափոխել Զանանաբ (Ցղնա) եւ որ նրանց ուղեկցելու է ոմն Սաթուր, որը հայտնի ավազակ էր: Բնակչությունը այդ իմանալով սարսափում է եւ նորից դիմում Էդիֆ բեյին, որ նա անձամբ ուղեկցի հայերին: Սակայն վերջինս թաքնվում է հայերից, իսկ միլիցիոներները սկսում են հայերին մտրակներով դուրս հանել տներից եւ հանձնել կանոնավոր զորամասերին, որոնք երկու ժամում կոտորում են բոլորին: Ալան-թալանի միջոցին Հ. Տեր-Անտոնյանին հաջողվում է փախչել եւ հասնել Ցղնա, այնտեղից էլ Երեւան[17]:

ՀՀ արտաքին գործերի նախարարության կազմած տեղեկագրի համաձայն, Ն. Ագուլիսում կոտորվել էր 700, իսկ Վ. Ագուլիսում՝ 1000 հայ բնակիչ[18]:

Գրականության մեջ երբեմն Ագուլիսների անկումը բացատրվում է Գեղվաձորի դեպքերով: Մասնավորապես, Հ. Հախնազարյանը հաճախ է կրկնում, որ եթե չլինեին

16 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թթ. 72-73:
17 Տե՛ս անդ:
18 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 368, ց. 1, գ. 5, թ. 105:

Գեղվաձորի դեպքերը, Ագուլիսները կանգուն կլինեին[19]: Նույնն են ասել նաեւ Նախիջեւանի թուրք-ադրբեջանական իշխանությունները: Պատասխանելով Զանգեզուրի՝ 1919 թ. դեկտեմբերի 27-ի վերջնագրին հայերի կոտորածները վերջ տալու մասին, այսպես կոչված Հարավ-արեւմտյան Ադրբեջանի (Նախիջեւանի) գեներալ-նահանգապետը մեղքը բարդում էր Ողջիի եւ Կիգի-Դարասի գազազած փախստականների վրա: Այդ բացատրությունն անհեթեթ է, մերժելի[20]: Գուցե այն պատճառով, որ թուրքերը հայերի ջարդերը իրականացնում էին համատարած ձեւով՝ անկախ հայերի պահվածքից:

Անանուն հեղինակը, նկարագրելով Ղափան-Գենվազի եւ Գողթնի 1919 թ. աշնանային դեպքերը, գրում է. «Ագուլիսի թուլամորթ հայերը, կուրորեն հավատալով (Էդիֆ բեյի) խոստումին, ոչ գաղթում են դեպի Ցղնա եւ ոչ էլ օգնություն խնդրում Գողթնի զորամասից, չնայած Ն. Ագուլիսը կոտորելուց հետո անմիջապես զորամասի պետ Քոչարյանը քանիցս անգամ դիմում է Վ. ագուլիսցիներին, որպեսզի նրանք համաձայնեն, թույլ տան գիշերով 200 զինվորներ մտցնենք այդ գյուղը, թե իրենց պաշտպանենք եւ Ագուլիսները բազա ստեղծենք Օրդուբադի դեմ գործողություններ սկսելու: Պատասխանը միշտ էլ լինում էր նույնը. «Մեզ հետ գործ չունեք, մենք հաշտ ապրում ենք թուրքերի հետ եւ թե մեր սիրելի Էդիֆը խոստացել է ինչ գնով էլ լինի մեզ պաշտպանել»: Ահա այդպես Ագուլիսները զոհ գնացին իրենց կույր հավատին դեպի Էդիֆները եւ ընկերները»[21]:

Իսկ ինչպիսին էր ՀՀ կառավարության վերաբերմունքը այս ամենի նկատմամբ: Ագուլիսցիների կոտորածների կապակցությամբ ՀՀ կառավարությունը վճռական բողոքով դիմեց Դաշնակից պետությունների ներկայացուցիչներին եւ դեկտեմբերի 29-ի հեռագրով պահանջեց անհապաղ ձեռնարկել նոր միջոցներ արյունահեղությունների առաջն առնելու համար: Միաժամանակ նշվում է, որ Նախիջեւանը փաստորեն գտնվում է թուրք-ադրբեջանցիների իշխանության ներքո եւ որ հայկական բնակչության կոտորածներն իրականացվել են թուրքական սպաների ղեկավարությամբ[22]: Հաջորդ օրը նույն բովանդակությամբ հեռագիր ուղարկվեց նաեւ Ադրբեջանի եւ Վրաստանի արտաքին գործերի նախարարներին, որտեղ Ադրբեջանի կառավարությունը մեղադրվում էր 1919 թ. նոյեմբերի 23-ի հայ-ադրբեջանական համաձայնագիրը խախտելու մեջ[23]: Ինչ վերաբերում է Շարուր-Նախիջեւանում անձնատուր եղած հայ բնակչությանը եւ զինվորներին, ՀՀ կառավարությունը դեռեւս 1919 թ. նոյեմբերի 15-ին որոշել էր նրանց տեղափոխել Երեւանի գավառ: Դեկտեմբերի 29-ին որոշվեց 50 հազար ռուբլի տրամադրել Ալիխան Մակինսկուն, որը հանձն էր առել մեկնել Շարուր եւ հայերին տեղափոխել, իսկ

19 Տես **Ն. Հախնազարյան**, անդ, էջ 358:
20 Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 484, թ. 9:
21 ՀԱԱ, գ. 475, թ. 54:
22 Տես ՀԱԱ, գ. 282, թ. 182:
23 Տես ՀԱԱ, գ. 282, թ. 184-185:

1920 թ. փետրվարի 5-ին որոշվեց գերի թուրքերին փոխանակել Խանլուխլարի, Թ-ազաքենդի (Ասպապատի) եւ Ագուլիսի հայ գերիների հետ[24]:

1920 թ. փետրվարին Ալիխան Մակինսկին եւ ուրիշներ ամերիկացի գնդապետ Շելլի ղեկավարությամբ, մի քանի բեռնատար մեքենաներով, 1500 փութ ալյուր, շաքար եւ այլ մթերքներ, մեկնեցին Շարուր-Նախիջեւան, հայ գերիներին Հայաստան կամ Պարսկաստան տեղափոխելու համար:

Սակայն այս առաքելությունը լրիվ ձախողվեց. թուրքերը նրանց չթողեցին Նախիջեւանից այն կողմ անցնել, իսկ մթերքներն ու զումարները բռնագրավեցին, բաժանեցին տեղացի թուրքերին[25]: Այս մասին Շելլը զեկուցում է նաեւ գնդապետ Հասկելին:

Այսպիսով, Գողթնի հայկական այն գյուղերը, որոնք ապավինեցին իրենց ուժերին, դրսեւորեցին համերաշխություն եւ կազմակերպված պաշտպանվեցին, փրկվեցին կոտորածից, իսկ մյուսները, ովքեր հանձնվեցին թշնամու ողորմածությանը՝ կոտորվեցին:

24 Տե՛ս ԲՀԱ, էջ 72:
25 Տե՛ս անդ: